

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՐ ԼՈՒՄԱՌԻԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 24 Փետրուար 2019

99

DIMANCHE, 24 Février 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
stgregorychurch@gmail.co | www.saintgregory.ca

Զ. Կիրակի զկնի Ծննդեան
6^{ème} Dimanche après Noël

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԵԼԵՆ
63.18- 64.12

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ՏԻՏՈՍԻՆ ԳՐՈՒԿԾ ՆԱՄԱԿԵՆ
1.1-11

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱԼԵՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ
7.37-52

Les lectures de la Bible d'aujourd'hui :

2 Timothée: 1.1-11

Jean 7.37-52

Պատարագիչ՝ Յոզեֆ Յովիլ
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Célébrant: Prêtre Paroissial
RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին
Office Matines à 9 :30

Ս. Պատարագ ժամը 10:30-ին
La Sainte Messe à 10:30

Յոգեանգստեան Պաշտօն կէսօրին
Office de Requieme à Midi

Deacons - Acolytes

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organists: Mr. Karen Manucharyan
Mrs. Houri Bedrossian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՏՈՍԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

1.1-11

Պօղոս՝ Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ կանչուած Աստուծոյ ընտրեալներուն հաւատքն ու ճշմարտութեան գիտութիւնը առաջնորդելու, որ աստուածպաշտութեան համաձայն է, Յաւիտենական կեանքի յոյսով, որ անսուտն Աստուած խոստացած է դարեր առաջ եւ իր ժամանակին իր խօսքին քարոզութեամբ յայտնեց, որ ինծի յանձնուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամանովը, Տիտոսին իմ հարազատ որդիիս հասարակաց հաւատքովը՝ շնորհք եւ խաղաղութիւն Հօր Աստուծմէն ու մեր Փրկչէն, Տէր Յիսուս Քրիստոսէն:

Ասոր համար ես քեզ Կրետէ թողուցի, որպէս զի բոլոր պակաս բաները շտկես ու ամէն մէկ քաղաքի մէջ երեցներ կարգես, ինչ-պէս ես քեզի պատուիրեցի. Եթէ մէկը անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր, հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեան համար ամբաստանուած կամ անհնազանդ չըլլան: Վասն զի եպիսկոպոսը պէտք է անմեղադրելի ըլլայ Աստուծոյ տնտեսին պէս. ո՛չ յանդուգն, ո՛չ բարկացող, ո՛չ գինեմոլ, ո՛չ զարնող, ո՛չ անարգ շահախընդրութեան ետեւէ եղող, Հապա հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, Հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէս զի կարող ըլլայ ողջամիտ վարդապետութիւնով յորդորել եւ հակառակ կեցողները յանդիմանել: Քանզի շատ են անհնազանդները, ունայնութիւն խօսողները ու խաբողները, մանաւանդ անոնք որ թլփատութենէն են. Անոնք պէտք է պապանձեցնել, քանի որ ամբողջ տուներ կը կործանեն ու անպատեհ բաներ կը ստրվեցնեն անարգ շահախնդրութեան համար:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

7.37-52

Տօնին վերջին օրը Յիսուս կայներ էր, կ'աղաղակեր ու կ'ըսեր. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինձի գայ ու խմէ: Ան՝ որ ինձի հաւատայ՝ ինչպէս գիրքը կ'ըսէ. 'Անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բխին'»: Այս ըսաւ Հոգին համար, որ իրեն հաւատացողները պիտի առնէին, վասն զի Սուրբ Հոգին տրուած չէր տակաւին, քանզի Յիսուս դեռ փառաւորուած չէր:

Ժողովուրդէն շատ մարդիկ երբ այս խօսքը լսեցին՝ ըսին. «Իրաւցնէ ասիկա է մարգարէն»: Ուրիշներ ըսին. «Ասիկա է Քրիստոսը». ուրիշներ ալ. «Միթէ Քրիստոսը Գալիլիայէն պիտի գայ: Չէ՞ որ գիրքը կ'ըսէ թէ Քրիստոս Դաւիթին սերունդէն ու Դաւիթին եղած գիւղէն Բեթլեհէմէն պիտի գայ»: Ուստի ժողովուրդին մէջ երկպառակութիւն եղաւ անոր համար: Անոնցմէ ոմանք ուզեցին բռնել զանիկա, բայց մէկը անոր ձեռք չզարկաւ:

Սպասաւորները նորէն զացին քահանայապետներուն եւ փարիսեցիներուն, որոնք հարցուցին. «Ինչո՞ւ զանիկա հոս չբերիք»: Պատասխան տուին սպասաւորները. «Երբեք մէկը այդ մարդուն պէս խօսած չէ»: Այն ատեն փարիսեցիները հարցուցին անոնց եւ ըսին. «Միթէ դո՞ւք ալ մոլորեցաք: Իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատաց անոր. Բայց այս ռամիկ ժողովուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նզովուած են»: Նիկողէմոս ըսաւ անոնց, (որ զիշեր ատեն իրեն զացեր էր եւ անոնցմէ մէկն էր,) «Միթէ մեր օրէնքը մարդ կը դատէ՞, եթէ առաջ անկէ բան մը չլսէ եւ չգիտնայ թէ ի՞նչ կ'ընէ»: Պատասխան տուին ու ըսին անոր. «Միթէ դո՞ւն ալ Գալիլիայէն ես. քննէ՛ ու նայէ՛, որ Գալիլիայէն մարդ չ'ելլեր»: Եւ ամէն մէկը իր տունը գնաց:

Tite 1.1-1Bile

Paul, Serviteur de Dieu, et Apôtre de Jésus-Christ, selon la foi des élus de Dieu, et la connaissance de la vérité, qui est selon la piété; Sous l'espérance de la vie éternelle, laquelle Dieu, qui ne peut mentir, avait promise avant les temps éternels; Mais qu'il a manifestée en son propre temps, [savoir] sa parole, dans la prédication qui m'est commise, par le commandement de Dieu notre Sauveur:

A Tite mon vrai fils, selon la foi qui [nous] est commune; que la grâce, la miséricorde, et la paix te soient données de la part de Dieu [notre] Père, et de la part du Seigneur Jésus-Christ, notre Sauveur.

La raison pour laquelle je t'ai laissé en Crète, c'est afin que tu achèves de mettre en bon ordre les choses qui restent [à régler], et que tu établisses des Anciens de ville en ville, suivant ce que je t'ai ordonné; [Ne choisissant] aucun homme qui ne soit irrépréhensible, mari d'une seule femme, et dont les enfants soient fidèles, et non accusés de dissolution, ou qui ne se puissent ranger. Car il faut que l'Evêque soit irrépréhensible, comme étant dispensateur dans [la Maison] de Dieu, non adonné à son sens, non colère, non sujet au vin, non batteur, non convoiteux d'un gain déshonnête. Mais hospitalier, aimant les gens de bien, sage, juste, saint, continent; Retenant ferme la parole de la vérité comme elle lui a été enseignée, afin qu'il soit capable tant d'exhorter par la saine doctrine, que de convaincre les contredisants.

Car il y en a plusieurs qui ne se peuvent ranger, vains discoureurs, et séducteurs d'esprits, principalement ceux qui sont de la Circoncision auxquels il faut fermer la bouche.

[Et] qui renversent les maisons tout entières enseignant pour un gain déshonnête des choses qu'on ne doit point [enseigner].

Jean 7.37-52

Et en la dernière et grande journée de la Fête, Jésus se trouva là, criant, et disant : si quelqu'un a soif, qu'il vienne à moi, et qu'il boive. Celui qui croit en moi, selon ce que dit l'Ecriture, des fleuves d'eau vive découleront de son ventre. (Or il disait cela de l'Esprit que devaient recevoir ceux qui croyaient en lui; car le

Saint-Esprit n'était pas encore [donné], parce que Jésus n'était pas encore glorifié.)

Plusieurs donc de la troupe ayant entendu ce discours, disaient : celui-ci est véritablement le Prophète. Les autres disaient : celui-ci est le Christ. Et les autres disaient : mais le Christ viendra-t-il de Galilée? L'Écriture ne dit-elle pas que le Christ viendra de la semence de David, et de la bourgade de Bethléhem, où demeurait David? Il y eut donc de la division entre le peuple à cause de lui. Et quelques-uns d'entre eux le voulaient saisir, mais personne ne mit les mains sur lui.

Ainsi les huissiers s'en retournèrent vers les principaux Sacrificateurs et les Pharisiens, qui leur dirent : pourquoi ne l'avez-vous point amené? Les huissiers répondirent : jamais homme ne parla comme cet homme. Mais les Pharisiens leur répondirent : n'avez-vous point été séduits, vous aussi? Aucun des Gouverneurs ou des Pharisiens a-t-il cru en lui? Mais cette populace, qui ne sait ce que c'est que de la Loi, est plus qu'exécration. Nicodème (celui qui était venu vers Jésus de nuit, et qui était l'un d'entre eux) leur dit : Notre Loi juge-t-elle un homme avant que de l'avoir entendu, et d'avoir connu ce qu'il a fait? Ils répondirent, et lui dirent : n'es-tu pas aussi de Galilée? enquiers-toi, et sache qu'aucun Prophète n'a été suscité de Galilée.

ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԱՍՏՈՒԹԻՒՆ

«Եւ մենք բոլորս շատ հպարտութիւն ունինք: Բառերը մեզ չեն խոնարհեցներ: Ահաւասիկ Տէրը թոյլ կու տայ ամէն տեսակի ամօթալի վիճակի մէջ իյնալ, որպէսզի մարդը անգիտակցաբար ենթարկուի իր աննշան եւ անշուք ըլլալու գիտակցութեան: Մեր ամբողջ գեղեցկութիւնը՝ ամբողջ բարին Տիրոջ մէջ է եւ Տիրոջ միջոցով է»:

Հայր Նիկոն Վորոբեով

«Հոգիին խաղաղութիւնը աւելի շատ կը կորսուի մերձաւորները դատելով եւ քու կեանքէդ անգոհունակ ըլլալով»:

Սբ. Յովհան Ոսկեբերան

ՇԱԲԹՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Բարկություն»

«Բարկություն»ը, իր ամենալայն իմաստով, մարդու հակազդեցությունն է անհաճոյ, անընդունելի եւ բարոյապէս վիրաւորիչ արարքի մը հանդէպ: Անշուշտ, բարկութեան արտայայտութեան ձեւը կարելոր է մանաւանդ մարդկային փոխարարբերութիւններու մէջ: Ուստի բարկութիւնը պէ՛տք է համեմատական ըլլայ բարկութեան առիթ տուող արարքին հետ, համապատասխանէ անոր թողած ազդեցութեան: Արդարեւ, բարկութիւնը բնական զգացում մըն է. որեւէ արարքի հակազդեցութիւն ցոյց տալ մարդկային է եւ որոշ սահմաններու մէջ հասկնալի, այսինքն բնական:

Արարքի մը հակազդեցութիւն չտուող անձը «անտարբեր» եւ կամ «անզգայ» մարդ է, ինչ որ անոր զգացական եւ բանական էակ մը ըլլալու հանգամանքին հակասութիւն մը կը ստեղծէ ասիկա:

Ուստի կարելորը բարկութեան արտայայտութեան ձեւն է, եւ հարցը բարկանալու կամ չբարկանալու հարց չէ՛. այլ բարկութեան իր պատճառին համապատասխան ըլլալու եւ չըլլալու հարց մըն է:

Բարկութիւնը զգացում մըն է՝ բնական, բայց անոր արտայայտութիւնը պէտք է հակակշռուած ըլլայ մարդու կամքին եւ բանականութեան հետ: Ուստի, բարկութեան արտայայտութիւնը պէտք է ըլլայ ճիշդ անձի, յարմար ժամանակի, պատշաճ չափով եւ համեմատութեամբ՝ այն ինչ որ կը համապատասխանէ բարկութեան նիւթին կամ պատճառին: Չափազանցուած բարկութիւնը մարդս նեղ դրութեան կը մատնէ, ինչպէս առածը կըսէ. «Բարկութիւնը կու գայ՝ մարդու աչքը կը կարմրի, բարկութիւնը կը մեղմանայ՝ մարդու դէմքը կը կարմրի»: Եւ այս կը նշանակէ որ բարկութիւնը երբ չափազանցուած է մարդս ամօթապարտ վիճակի կը մատնէ:

Արդարեւ, «բարկութիւն»ը աստուածային է: «Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը եւ անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռներ են» (ՀՌՈՄ. Ա 18):

Աստուած բարկացած է մարդոց ամէն մեղքին դէմ եւ ամէն մեղք պիտի պատժէ: Ուստի Ան պիտի դատապարտէ «հեթանոս»ները, նախ՝ ամբարշտութեան համար, եւ երկրորդ՝ չար գործերուն համար:

Բայց «Աստուծոյ բարկութիւն»ը՝ ո՛չ թէ ռիսակալութեամբ եւ չարասրտութեամբ, այլ աստուածային անհուն կարեկցութեամբ եւ գթութեամբ կ'արտայայտուի: Աստուած կը բարկանայ «արդար զայրոյթ»ով, քանի որ Ան ո՛չ ռիսակալ է եւ ո՛չ ալ չարասիրտ, այլ մեղքերու դէմ սուրբ տհաճութիւն մը ունի, որ մաշող կրակի նման պիտի բորբոքի մեղաւորներուն դէմ, թէպէտ Աստուած ասոնց համար ունի նաեւ անհո՛ւն կարեկցութիւն եւ գթութիւն:

Աստուծոյ արդար բարկութիւնը կը յայտնուի անոր դատաստաններէն եւ անոր ձայնէն՝ որ մեղաւորներու խղճին կը խօսի:

Մարդիկ իրենց չար գործերով մերժա՛ծ կամ ապարդիւն ըրած են այն ազդեցութիւնը, որ Աստուծոյ գոյութիւնը, անոր ստորոգելիները եւ արդար պահանջումները ճանչնալէն կրնար յառաջ գալ: «Մերժել» կամ «ետ բռնել» կը նշանակէ՝ այնպէս ընել որ ճշմարտութիւնը ազդեցութիւն չունենայ: Անոնք յանցաւոր կը նկատուին, ո՛չ թէ տգէտ են ճշմարտութեան, այլ որովհետեւ կը պատերազմին այն ճշմարտութեան դէմ, զոր բուն իսկ իրենց բնութիւնը եւ Աստուծոյ արարածները կը յայտնեն անոնց:

Արիստոտէլ յոյն իմաստասէրը կըսէ. «Աստուած որ ամէն մահկանացու էակի անտեսանելի է՝ իր գործերո՞վ կը տեսնուի»:

Նաբոլէոն գիշեր մը իր անհաւատ պաշտօնէաներէն ոմանց խօսակցութիւնը մտիկ ընելէն ետք, ձեռքով աստղերը միայն ցուցնելով բարձրաձայն գոչեց. «Տեսա՞ք, ո՞վ ըրաւ բոլոր ասոնք»:

Արդարեւ, մարդուն գործերը անոր մտքին խորհուրդները կը ցուցնեն. այսպէս ալ տիեզերքի բոլոր բաները Արարչին խորհուրդները ցոյց կու տան:

Եւ այս արարչութիւնը ունի անշուշտ իր օրէնքները՝ որոնց օրէնսդիրն է նոյն ինքն Արարիչը: Այդ օրէնքները պահպանելու համար պէտք է ընդհանուր կարգապահութեան տիեզերական կանոն մը. եւ անշուշտ «աստուածային արդար բարկութիւն»ը այստեղ կը յայտնուի՝ որպէս ուղեցոյց այդ կանոնին: Բայց ինչպէս յիշուեցաւ, «աստուածային բարկութիւն»ը երբեք ռիսակալութեան եւ չարասրտութեան հանգամանք չունի, քանի որ ան միայն հայրական ազդարարութիւն մըն է, թերեւս անդրադարձ-

նելու համար ամեն անոնք, որոնք շեղած կամ մոլորած են ուղիղ ճամբէն եւ հակադրած բնութեան աստուածահաստատ օրէնքներուն: Ուստի աստուածային բարկութիւնը երբեք կորուստի մատնելու, ոչնչացնելու նպատակ չունի, այլ միայն կորուստը կանխելու եւ արգելք ըլլալու, գտնելու եւ շահելու ւ:

Ահաւասիկ, այս ուղղութեամբ, մա՛րդն ալ պէտք է զգոյշ գտնուի բարկութեան պարագային, եւ բարկութիւնը ո՛չ թէ ռիսկալութեան եւ պատիժի միջոց, այլ եւ՝ սխալած մէկը, յանցաւոր մարդը անդրադարձնելու իր սխալին կամ յանցանքին, որպէսզի ան դարձեալ գտնէ ուղիղ ճամբան: Ուրեմն բարկութիւնը պէտք է օգտագործել միշտ որպէս շինիչ, նորոգիչ միջոց եւ ո՛չ թէ պատժելու շարժառիթ:

Բարկութիւնը պէտք չէ՛ որ գերի առնէ մարդուս կամքը, բանականութիւնը, որպէսզի մարդ աւելի վերջ ամօթ չզգայ բարկութեան ազդեցութեամբ կատարած չարագործութիւններուն պատճառով:

Ըսուեցաւ որ բարկութիւնը բնական հակազդեցութիւն մըն է, եւ ուրեմն բարկութիւնը անբաժան է մարդկային կեանքէն, եւ մանաւանդ մարդկային փոխյարաբերութիւններու մէջ: Եւ բարկութիւնը քանի որ բնական է, ուրեմն ունի իր օգուտը, բաւ է որ անիկա տեղին, չափաւոր եւ համապատասխան արտայայտուի:

Արդարեւ, բարկութիւնը զսպանա՛կ մըն է մարդուս կիրքերուն, եւ մասամբ հանդարտեցուցիչ, քանի որ ան կը կանխէ աւելի մեծ եւ վտանգաւոր պոռթկումները:

Հաւասարակշռուած եւ չափաւոր բարկութիւնը լուծում կը խոստանայ մարդոց միջեւ ծագած զանազան անհամաձայնութիւններու, խնդիրներու. ան առիթ կ'ընծայէ որ մարդ անդրադառնայ եւ զգաստանայ իր յարաբերութիւններուն մէջ եւ այս կերպով մշակուիին լաւ բարեկամութիւններ, հաստատուիին երջանիկ եւ սիրալի՛ր ընկերութիւններ...:

Աղբիւր՝

ՄԱՇՏՈՅ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆԻ քարոզներէն



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹԸ

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ ՉԱՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իմ անձս քու ձեռքերուդ մէջ է միշտ, եւ Սուրբ Խաչիդ կը յուսամ, թագաւոր երկնաւոր: Քու սուրբերուդ բազմութիւնը որպէս բարեխօս ունիմ առջեւդ: Դուն, որ կը մտածես ամենուս մասին, մի անտեսեր Քեզի ապաւինողները, այլ խաղաղութեան մէջ պահպանէ պատուական եւ սուրբ Խաչովդ:

Փրկէ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ գոհանալով փառք տալ Քեզի Հօր եւ Սուրբ Հոգիի հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

PRIÈRE A LA SAINTE CROIX POUR ÊTRE PROTÉGÉ DES MÉCHANTS

Mon âme est toujours entre tes mains et, dans la sainte Croix, j'ai placé ma confiance, ô Roi du ciel. Je regarde la multitude de tes saints comme intercesseurs auprès de toi. Ô toi, le longanime envers tous, ne méprise pas ceux qui ont trouvé refuge en Toi, mais protège-les dans la paix avec ta précieuse et sainte Croix.

Délivre – nous des ennemis visibles et invisibles. Rends-nous dignes de te rendre grâces et de te glorifier avec le Père et la Saint- Esprit, maintenant et toujours et pour l'éternité de l'éternité. Amen.

ՏՕՆԵՐ

21 Փետրուար 2019

Սուրբ Ոսկեանց Քահանաներու Յիշատակութեան Օր

Ըստ ազգային ասանդութեան, Ոսկեանք Հռոմի կայսրի կողմէն հայոց Սանատրուկ թագաւորին մօտ ուղարկուած 5 դեսպաններ էին, որոնք առաջին դարու կէտերուն գալով Հայաստան, կը հանդիպին Թադէոս Առաքեալին եւ անոր քարոզներէն ազդուած, կը մկրտուին՝ դառնալով քրիստոնեայ: Անոնցմէ գլխաւորը՝ Խռուսին (հայերէնով՝ կը նշանակէ Ոսկի, այստեղէն է՝ Ոսկեաններ անուանումը), կը ձեռնադրուի նաեւ քահանայ: Թադէոս առաքեալի նահատակութենէն յետոյ Ոսկեանք կը մեկուսանան Հայոց Ծաղկոտն գաւառի Ծաղկաւետ



կոչուած լեռներուն մէջ եւ շուրջ 40 տարի ճգնաւորներու կեանք կը վարեն: Առաջնորդուելով աստուածային պատգամով՝ անոնք կու գան հայոց արքունիք՝ քրիստոնէութիւն քարոզելու հայոց Արտաշէս թագաւորին ու Սաթենիկ թագուհիին: Արքունիքին մէջ Ոսկեաններուն կը հետեւին միայն Սաթենիկ թագուհիին ազգականները: Ալանաց երկրէն թագուհիին հետ Հայաստան եկած շուրջ 18 պալատականներ, որոնք մկրտութիւն կը ստանան Եփրատ գետին մէջ եւ Ոսկեաններուն հետ կը հեռանան լեռներ:

Սաթենիկ թագուհիին ազգականները, որոնք կը հետեւէին Ոսկեաններուն, իրենց գլխաւորին՝ Սուքիասի անունով հետագային կը կոչուին Սուքիասեանք: Չյաջողելով համոզել եւ ետ վերադարձնել նախկին պալատականներուն՝ Հայոց արքայորդիները վրէժխնդիր կ'ըլլան անոնց քարոզիչներուն՝ Ոսկեաններուն, սրախողխող ընելով անոնց:

Ոսկեանները Հայ եկեղեցւոյ առաջին նահատակներէն ու ճգնաւորներէն են: Անոնց յիշատակութիւնը, ըստ եկեղեցական օրացոյցին կը տօնուի կամ Առաջաւորաց Պահքին յաջորդող Հինգշաբթի օրը (ինչպէս այս տարի) կամ Սուքիասեանց տօնին հետ միասին:

23 Փետրուար 2019

Տօն Ս. Սահակ Պարթև Հայրապետի

Ս. Սահակ Հայրապետը Ներսէս Մեծ կաթողիկոսի որդին էր, Ս. Գրիգոր Լուսավորիչի տոհմին վերջին ներկայացուցիչը, 387-էն



սկսած 52 տարիներ եղած է Հայոց հայրապետական աթոռի գահակալը: Ըլլալով կրթուած եւ հմուտ երաժրշտական, հռետորական արւեստներուն, իմաստասիրութեան եւ լեզուագիտութեան մեջ, Սահակ Պարթևը մեծ նպաստ բերած է Հայ ազգային մշակոյթի զարգացման, եղած է Հայոց գիրերու ստեղծման ջատագովր, Մետրոպ Մաշտոց վարդապետի հետ դարձած Հայ դպրութեան ու եկեղեցական մատենագրութեան հիմնադիր: Տառերու գիտէն յետոյ Ս.

Սահակն ու Ս. Մետրոպը կը սկսին Աստուածաշունչի թարգմանութեան եւ այնպէս կատաեալ կերպով կը կատարեն այն, որ Աստուածաշունչի Հայերէն թարգմանութիւնը դարեր յետոյ կը կոչուի Աստուածաշունչի թարգմանութիւններու թագուհին:

Holidays

February 21, 2019

Feast of the Holy Voskian Priests

According to tradition, the Armenian King Sanadrook sent these five leaders to Rome as ambassadors. On their way they met the Apostle Thaddeus who converted and baptized them. Their leader, Voski, whose name they bear, led them to the mountains in one of the eastern provinces; there they lived as hermits for over forty years whereupon they started to preach to the Royal Court. There, they converted Queen Satenig's relatives who were Caucasian Albanians and called the Sookiasians. The Voskian priests were martyred by Prince Ardavast in 107 A.D.

February 23, 2019

Saint Isaac [Sahak] Bartevoour Patriarch

Catholicos or Patriarch of Armenia (338 – 439), otherwise known as ISAAC THE GREAT and sometimes as PARTHEV owing to his Parthian origin. He was the son of Saint Nerses the Great [also called Nerses the Parthian] and descended from the family of Saint Gregory the Enlightener. Left an orphan at a very early age, he received an excellent literary education in Constantinople, particularly in the Eastern languages. After his election as patriarch he devoted himself of the religious and scientific training of his people. Armenia was then passing through a grave crisis. In 387 A.D. it had lost its independence and been divided between the Byzantine Empire and Persia; each division had its head an Armenian but feudatory king. In the Byzantine territory, however, the Armenians were forbidden the use of the Syriac language, until then exclusively used in the Divine worship: for this the Greek language was to be substituted. Because of the use of Greek, the country gradually hellenized in the Persian districts where Greek was absolutely prohibited and Syriac greatly favored. Hence, the ancient culture of the Armenians was in danger of disappearing and national unity was seriously compromised. To further evangelize the people and preserve its national character, Isaac invented with the aid of Saint Mesrop, the Armenian alphabet and began to translate the Bible. Their translation from the Syriac Peshito was revised by means of the Septuagint, and even, it seems from the Hebrew text (between 410 and 430). The liturgy also, hitherto Syrian was translated into Armenian, drawing at the same time on the Liturgy of St. Basil of Caesarea. Isaac had already established schools for higher education with the aid of disciples whom he had sent to study at Edessa, Melitene, Byzantium, and elsewhere. Through them he now had the principal masterpieces of Greek and Syrian Christian literature translated, e.g. the writings of Athanasius, Cyril of Jerusalem, Basil, the two Gregorys (of Nazianzus and of Nyssa), John Chrysostom, Ephrem, etc.; therefore ushering in the Golden Age of Armenian literature. Through Isaac's efforts the churches and monasteries destroyed by the Persians were rebuilt, education was cared for in a generous way, the pagan worship of Ormuzd which Shah Yezdigerd tried to set up was cast out, and three councils were

held to reestablish ecclesiastical discipline and canon law. Isaac is said to have been the author of liturgical hymns. Two letters, written by him to Theodosius II and to Atticus of Constantinople, have been preserved. A third letter addressed to Proclus of Constantinople was not written by him, but dates from the 10th century. Neither did he have any share, as was wrongly ascribed to him, in the Council of Ephesus (431), though, in consequence of disputes which arose in Armenia between the followers of Nestorius and the disciples of Aacis of Melitene and Rabulas, Isaac and his church did appeal to Constantinople and through Proclus obtained the desired explanations. A man of enlightened piety and of very austere life, Isaac owed his disposition by the king in 426 to his great independence of character in 430 he was allowed to resume his patriarchal throne. In his extreme old age he seems to have withdrawn into solitude, dying at the age of 110. Neither the exact year nor the precise month of his death is known, but it seems to have occurred between 439 and 441. There are several days of commemoration to him in the calendar of the Armenian Church.

ՆՈՒԲԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

CHURCH:

Manoir Gouin Seniors \$117

RENOVATION FUND:

IN MEMOY OF THE LATE MARIE NAZARETIAN BALTAYAN:

Mr. Stephan Baltayan \$3000

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE VERKIN YANCI TOR:

Karin & Aline Tor \$200, Mr. Alex Kisa, Mr. & Mrs. Zareh & Elmas Kisa, Mr. & Mrs. Martin & Sossi Marasliyan \$100, Mrs. Susan Met \$50

HOKEHANKISD:

THE LATE TAMARA MARDIROSSIAN:

Mr. & Mrs. Kegham Mardirossian \$100

THE LATE SAAKIAN FAMILY:

Mrs. Daisy Saakian \$20

Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

Փետրուար– Février

25, Երկուշաբթի - Սրբոցն Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի եւ Բենիամինի սարկաւազացն, եւ սրբոց վկայիցն Արդլմսեհի, Որմզդանայ եւ Սայենի:

Lundi 25 – Fête des saints: l' évêque Marc, le prêtre Pion, les diacres Cyrille et Benjamin et les saints martyrs Abdelmesseah et Sayen.

26, Երեքշաբթի – Տօն Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն:
Mardi 26 - Fête des Saints prêtres Ghévontians

27, Չորեքշաբթի – Պահք:
Mercredi 27 - Jeûne.

28, Հինգշաբթի – Տօն Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:
Jeudi 28 – Fête des Saints Vartanants, de nos troupes et des 1036 martyrs qui se sont sacrifiés lors de la grande bataille.

Մարտ – Mars

1, Ուրբաթ - Պահք:
Vendredi 1 - Jeûne.

2, Շաբաթ – Տօն Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյն՝ հարիւր յիսուն Հայրապետացն (381 թ.):
Samedi 2 – Fête des 150 Patriarches du Saint Concile de Constantinapole (381).



ԽՈՐՀՈՒՐԴ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՀԱՆԳՍՏ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն գատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM

Nous informons les personnes qui désirent faire un REQUIEM à l'intention de leur chers disparus, qu'elles doivent être présentes à l'église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l'Église ou en contactant le Père.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Քրիստոս Աստուծոյ որդին, որ անոխակալ եւ բարեգութ ես,
քու արարչական սիրովդ գթա
հանգուցեալ ծառաներուդ հոգիներուն:
Յիշէ զանոնք արքայութեանդ գալստեան մեծ օրը:
Արժանի ըրէ ողորմութեան, քաւութեան
եւ մեղքերու թողութեան:
Չանոնք սուրբերուդ աջակողմը դասելով պայծառացուր :
Որովհետեւ դուն ես ամենուն Տէրն ու արարիչը.
ողջերուն եւ մեռելներուն դատաւորը:
Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնը եւ պատիւը.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեան, ամէն:



ԽԱՂԱՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

Մարտ 6 – Ապրիլ 18

2019

Մարտ 6 – Արժ. Տ. Հայ Արի Զինյ. Թանաշեան
Պահոց Ընթրիք – Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան

Մարտ 13 – Արժ. Տ. Տրդատ Զինյ. Թաշճեան
Պահոց Ընթրիք – Թէքէեան Սշակութային Միութիւն

Մարտ 20 – Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Միրզախանեան
Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Հայց. Առաք Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք

Մարտ 27 - Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան
Առաջնորդ Գանատահայոց Թեմի
Պահոց Ընթրիք – Տիկ. Փառանձեմ Գեորգեան եւ Թամար

Ապրիլ 3 – Գերյ. Հ. Գեորգ Ծ. Կրդ. Չապարեան
Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ Համայնքի
Պահոց Ընթրիք – Տիկ. Ռոզ Տիգրանեան

Ապրիլ 10 – Պատուելի Յովհաննէս Սվաճեան
Հոգեւոր Հովիւ - Հայ Աւետարանական Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Ապրիլ 18 – Աւագ Հինգշաբթի
Աւագ Հինգշաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 /

Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 24 Փետրուար 2019



Առաջնորդ Սրբազան Զոր թելադրութեամբ՝ Զոգեւոր Զովիւհն,
ծխական խորհուրդին եւ յարակից մարմիններուն խնդրանքով
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի,

**31 տարի առաջ Սումկայիթի
եւ Ատըրպէյճանի հայաբնակ այլ վայրերուն մէջ
գազանաբարոյ ջարդերուն զոհ գացած
հայորդիներու**

հոգիներուն ի հանգիստ



Առաջնորդ Սրբազան Զոր թելադրութեամբ՝ Զոգեւոր Զովիւհն,
ծխական խորհուրդին եւ յարակից մարմիններուն խնդրանքով
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի,

Ազգային, մշակութային, հայրենասիրական
եւ Եկեղեցական ոլորտներէն ներս
իր բազմաթիւ բարեսիրական գործունեութիւններով
ընդմիջտ իր աջակցութիւնը մատուցած
Ազգային մեծ բարերար՝

ԼՈՒԻՉ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆԻ

Անմոռաց յիշատակին



Տ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Արմինէ Ծիրինեանի,
Տ. եւ Տիկ. Տարօն-Վրեժ եւ Լոռա Ծիրինեանի եւ զաւկին,
Տ. եւ Տիկ. Դաւիթ եւ Զրիսթին Մաքսուեսեանի եւ զաւակներուն,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ հօր, մեծ հօր եւ մեծ մեծ հօր՝

ԲԱԲԳԸՆ ԾԻՐԻՆԵԱՆԻ (PAPKEN SIRINYAN)

մահուան 46-րդ տարելիցին առիթով
ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝

ՄԵԼԻՆԷ ՇԻՐԻՆԵԱՆԻ (MELINE SIRINYAN)

մահուան 9-րդ տարելիցին առիթով

ՇԻՐԻՆԵԱՆ ԵՒ ՓԱՓԱԶԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



Տօթ. Էտի Եղիայեանի, Տ. Ե. Տիկ. Ռիչըրտ Եղիայեանի,
Տ. Ե. Տիկ. Կերի Եղիայեանի, Օրդ. Անի Եղիայեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր Ե. ԱՆԾ մօր՝

ՄԱՐԹԱ ԵՂԻԱՅԵԱՆԻ (MARTHA YEGHIAYAN)

մահուան 3-րդ տարելիցին առիթով
ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ ծնողաց Ե. ԱՆԾ ծնողաց՝

**ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՄԱՐԻ ԵՂԻԱՅԵԱՆՆԵՐՈՒ
(GARABED & MARIE YEGHIAYAN)**

հոգիներուն ի հանգիստ



Պուլուր Ե. Զազարապետեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ հարազատին՝

ԳԵՈՐԳ ՊՈՒԼՈՒՐԻ (KEVORK BULUR)

մահուան առաջին տարելիցին առիթով

(Սուրճի սպասարկութիւն ,Վաչէ Յովսէփեանե սրահին մէջ)



Գարին Ե. Ալին Թորի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր՝

**ՆՈՒԱՐԴ ԹԱՖԹԻԲՕՂՈՒ
(NEVART TAFTIKOGLU)**

մահուան 3-րդ տարելիցին առիթով

**ՏԵՐԸ ՅԻՇԷ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐԸ
ԵՒ**

ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՅՆԷ



ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծիսական Խորհուրդը
Ողբացեալ

ՄԱՆՈՒՇԱԿ ՀԱՐԲՈՒԹԻ (MANUSAK HARPUT)

Մահուան տխուր առիթով
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:

ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծիսական Խորհուրդը
Ողբացեալ

ՍԱՐԳԻՍ ԱՐԱՊԵԱՆԻ (SARKIS ARABIAN)

Մահուան տխուր առիթով
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:

ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծիսական Խորհուրդը

Ողբացեալ
ԱՅՏԱ ՊԷԼԷՐԻ
(AYDA BELER)

Մահուան տխուր առիթով
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:

ՑԱԻԱԿՅԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը
Ողբացեալ

ՄԱՐՕ ՄԱՆԱՎԵԱՆԻ
(MARO MANAVIAN)

Մահուան տխուր առիթով
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:

ՑԱԻԱԿՅԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը
Ողբացեալ

ՎԵՐԿԻՆ ԵԱՆՃԻ ԹՈՐԻ
(VERKIN YANCI TOR)

Մահուան տխուր առիթով
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՏԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com
R. P. DAVID MARGARYAN, Prêtre Paroissial

21 Փետրուար 2019

Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան
Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Անդամ
Հոգեւորի Տ. Պարետ Ծ. Վրո. Երեցեանին

Հոգեւորի Հայր Սուրբ,

յանուն Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր դասին եւ ծխական խորհուրդին մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք Ձեզ, Ձեր տեսական եւ անկեղծ վարդաբոյր խունկի նուիրատութեան համար: Այսպիսով ապահովելով Ձեր ազնիւ ներդրումին առաքելութիւնը ինչպէս անցեալին, այնպէս եւ ներկայիս:

Կ'աղօթենք եւ կը մաղթենք Ձերոյ Հոգեւորիկութեան, որպէսզի Ամենակարողն Աստուած պարգեւէ կենաց արեւշատ օրեր, նորանոր ձեռքբերումներ եւ յաջողութիւններ Տիրոջ անդաստանէն ներս:

ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՆ ԼԻ ԵՂԵՒ ԱՆՈՒՇԱԶՈՏ
ԽՆԿՈՋՆ Ի ՇՆՈՐՀԻՒ ՀԱՅՐ ՊԱՐԵՏԻ ԵՒ Ի ՓԱՌՍ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ:

Խոնարհ աղօթակցութեամբ՝
Տեր Դաւիթ քնյ, Մարգարեան
Հոգեւոր հովիւ

Սիրով եւ միշտ պատրաստ ծառայելու՝
Պրն. Անդրանիկ Շիրինեան
Ատենապետ ծխական խորհուրդի

**«ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱԶԵԻՆԵՐ
SALUT DE PAIX**

Յարգելի հաւատացեալներ,
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը
փոխանակենք:

Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.

Celui qui salue dit:

1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:

Du 5 au 13 Janvier

Ծնունդի ութ օրերուն.-

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ est né et s'est révélé»

2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-

À partir de Pâques jusqu'à l'Ascension.-

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»

«Le Christ est ressuscité d'entre les morts»

3) Միւս օրերուն.-

Les autres jours.-

«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ s'est révélé parmi nous»

«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-

Celui qui reçoit le salut réponds:

1- Ծնունդի ութ օրերուն.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Naissance du Christ»

2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Résurrection du Christ»

3- Միւս օրերուն.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Révélation du Christ»



ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հըրաւիրենք հետեւեալ պարագաները.

- 1.** Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:
- 2.** Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
- 3.** Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
- 4.** Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պետք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ: Եկեղեցին ա-դօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՌՈՒԹԻՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՆ պետք է տիրէ:

OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1)** Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2)** Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3)** Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4)** Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

Website: www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ
Կայքէջը - Website www.saintgregory.ca
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները
եւ ձեռնարկները:

Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն
համացանցային դրութեամբ:
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,
Nous avons le plaisir de vous informer
de la récente mise à jour de notre
Site: www.saintgregory.ca
Ou vous trouvez les dernières nouvelles des activités
et des événements.
Nous remercions de votre soutien!

*Dear Parishioners,
We are glad to inform you our Church's newly developed
Website: www.saintgregory.ca
where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations
and benefiting from other possibilities of our Website.
Thank you for your support!*

Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէ ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծիական Խորհուրդ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



**Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

**ՏՕՆ
ՄՐԲՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ԶՕՐԱՎԱՐԱՅՆ**
(Սկաուտներու Օրհնութեան Օր)



**Հանդիսաւոր Ս. Պատարագ
Եւ Տօնակատարութիւն**

Նախագահութեամբ՝ Թեմիս Բարեշան Առաջնորդ
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
Արժ. Տ. Դաւիթ Քինյ, Մարգարեան

Հինգշաբթի, 28 Փետրուար 2019, Երեկոյեան ժամը 7-ին
Յաարտ Ս. Պատարագի հիւրավորութիւն <<Վաչէ Յովսէփեան>> սրահին մեջ
Սիրով կը հրավիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար ոգեւորչելու Սրբոց
Վարդանանց Նահատակներու յիշատակնու ամանորոյթը:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀՈԳԵԼՈՐ ԶՐՈՅՑ**

**Ձեր ուշադրութեան կը փափաքինք յանձնել,
թէ այս Հինգշաբթի, 28 Փետրուար 2019-ին
Սրբոց Վարդանանց Տօնի Պատարագին
առիթով Հոգեւոր Զրոյց**

տեղի պիտի չունենայ:

**Հոգեւոր Զրոյցը տեղի պիտի ունենայ
յառաջիկայ Հինգշաբթի,**

**7 Մարտ 2019, երեկոյեան ժամը 7-ին, Եկեղեցւոյ
մէջ:**

Études bibliques et discussions

**Nous vous informons qu'à l'occasion de la
Fête "Vartanantz" la session des études
Bibliques du 28 février est reportée
au 7 mars à 19h.**

**Nous invitons nos chers et chères Fidèles
à participer à cette séance d'interprétation biblique**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմութիւններ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քինյ. Մարգարեան



École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription

Contactez le secrétariat de l'Église (514) 279-3066

Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

Դաշնակի Դասընթացներ

Փոքրերու եւ չափասերու համար
Սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար
Անհատական դասընթացներ պիտի կատարուին՝
Ամէն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝

ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ հետ:

Շրջանաւարտ երաժշտագետ McGill համալսարանէն
եւ արժանացած Քեպեքի Ոսկեայ Մետալին
երաժշտական ծիրէն ներս:

Յաւելլեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults
For beginners & Music trainees
Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience
Theory & harmony
Preparation for Examen and competitions.
Master of Music in Performance from Mc Gill University
Quebec Gold Medalist

For further information
contact to the church office
at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
or Teacher- Zinaida Varosian
at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ


TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



MAY 7, 2019  MAY 20, 2019



The Women's Guild Central Council,
with the blessings of
H.G. Bishop Abgar Hovakimyan,
Primate of the Armenian Diocese of Canada,
organizes a



**TRIP TO THE ARMENIAN HERITAGE
SITES IN TURKEY**

(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes,
Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).



Cost \$2,200 USD (double occupancy)
\$2,600 USD (single occupancy)



Included: 13 nights accommodation at nice
hotels, Breakfasts & dinners,
professional guides (Armenian & English),
Bosphorus by boat,
transportation with high end buses,
domestic flight.



Not included: international airfare, lunches,
drinks, balloon tour in Cappadocia.



Places are limited !

Deposit \$500 by March 7.

Full payment by March 31.



For details, please contact the Diocese at (514) 276-9479 or contact@armenianchurch.ca, or
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or anita-ot@hotmail.com, or
Mrs. Ayda Afarian at (416) 885-0303 or aydaafarian@gmail.com





**ՀԱՅՑ. ԱՌԱՋ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Address : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2



Կարեւոր Ցայտարարութիւն

Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովի

Միրով կ'ուզենք տեղեկացնել մեր հայազն հաւատացելոց, որ հակառակ մեր ուղարկած նամակներուն, փոփոխութիւն տեղի ունեցած է Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովի կայանալիք օրւան թուականին հետ:

Հայցելով Ձեր ազնիւ ներողամտութիւնը կը հաստատենք, որ Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովը վերջնականապէս տեղի պիտի ունենայ **Կիրակի, Մարտ 17-ին**, յաւարտ Մբ. Պատարագի:

Արդ նոյն հաւատքով եւ նուիրումով կը սպասենք բոլորդ ամբողջացնելու մեր սոյն ժողովը, որ պիտի նպաստէ ծուխիս յառաջխաղացման եւ Եկեղեցւոյս առաւել կազմակերպման :

Շնորհակալութիւն

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ